

# ՏՕՆ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ

2006



## *Բովանդակություն.*

- Հոգեգալստեան Աստուածաշնչեան Ընթերցումներ.
- Կապակցում Ընթերցումների միջև.
- Վարդապետական Պատգամ.
- Հովուական մտորումներ:

Գործք Առաքելոց 2, 1-11

Երբ Պենտեկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասին հաւաքուած էին: Յանկարծ սաստիկ հողմի շաշիւնի նման մի ձայն հնչեց երկնքից եւ լցրեց ամբողջ տունը, ուր նրանք նստած էին: Ապա նրանց երեւացին հրեղէն լեզուներ, որոնք տարածուելով հանգչեցին իւրաքանչիւրի վրայ: Բոլոր ներկաները լցուեցին Սուրբ Հոգով եւ սկսեցին տարբեր լեզուներով խօսել, ինչպէս որ Հոգին խօսել էր տալիս նրանց:

Այդ օրը Երուսաղէմ քաղաքը լի էր բարեպաշտ հրեաներով, որոնք եկել էին աշխարհի բոլոր երկրներից: Երբ այս ձայնը լսուեց, մի մեծ բազմութիւն հաւաքուեց եւ խոնուեց, եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ լսում էին թէ ինչպէս նրանցից իւրաքանչիւրը խօսում է իրենց սեփական լեզուով: Ամէնքն էլ հիացմունքով եւ գարմանքով ասում էին միմեանց. «Այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ չե՞ն: Ինչպէս է պատահում, որ նրանք մեր ծննդավայր երկրների լեզուներով են խօսում, ինչպէս որ ահա լսում ենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, իլամացիներ, միջագետացիներ, հայաստանցիներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փոլիգիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանից լիբիացիներ, Հռոմից եկած հրեաներ եւ հրէութեան դարձած նորահաւատներ, կրետացիներ ու արաբիացիներ: Եւ ահա բոլորս էլ մեր խօսած լեզուներով իրենցից լսում ենք Աստուծոյ մեծամեծ գործերի մասին»:

Սաղմոս 104 [103]

Հոգի իմ, օրհնի՛ր Տիրոջը,  
քանի՛ցս մեծ ես, Տէր Աստուած իմ.  
Գգեստաւորուել ես գեղեցկութեամբ ու մեծվայելչութեամբ,  
փաթաթուել ես լոյսի պատմուճանի մէջ:

Դու տարածում ես երկինքը վրանի նման,  
ջրերի վրայ վեր ես խոյացնում օթեւաններդ.  
ամպերը Քո համար կառք ես դարձնում  
եւ պարում ես քամու թեւերի վրայ.  
քամիները Քո պատգամաբերներն ես դարձնում,  
Քեզ պաշտօնեաներ՝ կայծակի բոցերը:

Հիմքեր տուեցիր երկրին,  
որպէսզի յաւիտեան անասան մնայ.  
նրան որպէս հագուստ տուեցիր օվկիանոսը,  
նրա ջրերը ծածկում էին լեռները.  
յանդիմանեցիր նրանց, փախան,  
դողացին որոտմանդ ձայնից:

Լեռներից անցնելով, իջան հովիտներին,  
դէպի իրենց սահմանուած վայրը.  
անանցանելի սահման դրեցիր նրանց առաջ,  
չեն վերադառնայ ծածկելու երկիրը:

Յորդառատ գետեր ես բխեցնում աղբիւրներից,  
ընթանում են սարերի միջով.  
Չուր են տալիս դաշտերի կենդանիներին,  
վայրի ականակները յագեցնում են իրենց ծարաւը.

երկնքի թռչունները սալառնում են վերելում,  
երգեր են հիւսում տերեւների մէջ:

Քո օթեւաններից ոռոգում ես լեռները,  
յագեցնում ես երկիրը գործերիդ պտղով.  
Հովիտները բուսականութեամբ ես ծածկում հօտերի համար,  
եւ դաշտերը, որոնք մշակում է մարդը:  
Երկրից է մարդը հանում իր սնունդը,  
գինին, որ ուրախացնում է իր սիրտը,  
ձէթը, որ փայլեցնում է իր երեսը,  
հացը, որ ուժ է տալիս մարդու սրտին:

Յագենում են Տիրոջ ծառերը,  
Լիբանանի մայրիները, որ Նա տնկել է.  
Նրանց վրայ թռչունները բոյն են դնում,  
կիպարիսների վրայ արագիլն ունի իր տունը.  
Եղջերուներին՝ բարձր լեռները,  
նապաստակներին՝ ժայռերի ապաստանները:

Ստեղծեցիր լուսինը՝ տօները ցոյց տալու համար,  
եւ արեւը, որ գիտէ իր մայրամուտի ժամը.  
Իջեցնում ես խաւարը եւ գիշեր է,  
արթնանում են անտառի կենդանիները.  
Դէպի իրենց որսն են մոնչում առիւծի կորիւնները,  
Աստծուց խնդրում են իրենց կերակուրը:

Արեւը ծագելիս քաշում են,  
իրենց որջերում բոլորը հանդարտում են.  
Դուրս է գալիս մարդը աշխատանքի գնալու համար,  
իր գործը կատարելու համար մինչեւ երեկոյ:

Քանի՛ցս բազմաթիւ են գործերդ, Տէր,  
դրանք բոլորն էլ արել ես իմաստութեամբ.  
Քո արարածներով լի է երկիրը:

Ահա ծովը, ընդարձակ ու խոր,  
ուր անթիւ գեռում են կենդանիներ վիթխարի ու փոքրագոյն.  
Վերելում ընթանում են նաւերը,  
Լեւիաթանը, որ ստեղծեցիր, այնտեղ է խաղում:

Եւ բոլորը Քեզ են ապաւինում,  
որ Դու ժամանակին կերակրես իրենց.  
Դու պարգեւում ես այն, նրանք վերցնում են,  
բացում ես ձեռքդ, յագենում են բարիքներով:

Թաքցնում ես երեսդ, սարսափում են,  
ես ես վերցնում նրանց շունչը, մահանում են  
եւ վերադառնում են հողի փոշուն.  
առաքում ես Հոգիդ, ստեղծում են,  
եւ նորոգում ես երկրի երեսը:

Տիրոջ փառքը թող լինի յաւէտ,  
թող Տէրն ուրախ լինի Իր գործերով.  
Նա դիտում է երկիրը, որն իսկոյն դողում է,  
հպում է լեռներին, որոնք իսկոյն բոցավառում են:

Երգելու եմ Տիրոջը քանի դեռ ապրում եմ,  
չարականներ եմ ասելու իմ Աստծուն քանի դեռ գոյութիւն ունեմ.  
Երգս թող հաճելի լինի Նրան,  
որովհետեւ Տիրոջ մէջ է իմ բերկրանքը:

Մեղաւորներն անհետանալու են երկրից,  
հետք չի մնալու ամբարիչտներից:  
Հոգի իմ, օրհնի՛ր Տիրոջը: Ալէլուիա:

### Պօղոս Առաքեալի Նամակը Հռոմէացիներին 8, 8-17

Ահա թէ ինչու նրանք, որ մարմնականին են հետեւում, չեն կարող հաճելի լինել Աստծուն: Եթէ Աստծոյ Հոգին իսկապէս բնակւում է ձեր մէջ, նշանակում է՝ որ դուք այլեւս մարմնական ցանկութիւնների համաձայն չէք ապրում, այլ Սուրբ Հոգու կամեցած ձեւով: Իսկ նա, ով չունի Քրիստոսի Հոգին, Նրան չի պատկանում: Եթէ Քրիստոսը ձեր մէջ է ապրում, թէկուզեւ ձեր մարմինները կը մեռնեն, որովհետեւ մեղանչեցիք, բայց Սուրբ Հոգին դարձեալ կեանք կը տայ ձեզ, որովհետեւ արդարացած էք: Այսինքն, եթէ Աստծոյ Հոգին բնակւում է ձեր մէջ, Աստուած, որ Յիսուս Քրիստոսին յարութիւն տուեց մեռելներից, Իր Հոգու միջոցով, որը բնակւում է ձեր մէջ, կը կենդանացնի նաեւ ձեր մահկանացու մարմինները:

Հետեւաբար, եղբայրներ, չպէտք է մեր մարմնի համար եւ մարմնապէս ապրենք, որովհետեւ եթէ մարմնապէս ապրենք, կը մեռնենք, իսկ եթէ Հոգու օգնութեամբ սպանէք ձեր մեղքերը, կ'ապրէք: Աստծոյ որդիները նրանք են, որոնք առաջնորդւում են Աստծոյ Հոգով: Արդ, դուք Հոգին ստացաք ո՛չ թէ ծառայ դառնալու եւ դարձեալ վախով ապրելու համար, այլ Հոգին ստացաք Աստծոյ որդիներ լինելու համար: Այդ Հոգով է, որ Աստծուն «Աբբա», այսինքն՝ Հայր ենք կոչում, եւ նոյն Հոգին Ինքն է վկայում մեր հոգուն, թէ Աստծոյ որդիներ ենք: Իսկ եթէ որդիներ ենք, նշանակում է՝ որ նաեւ ժառանգորդներ ենք: Այո՛, մենք Աստծոյ ժառանգորդներն ենք եւ Քրիստոսին ժառանգակիցներ. մասնակից ենք լինում Նրա չարչարանքներին, որպէսզի մասնակից լինենք նաեւ Նրա փառքին:

### Յովհաննէսի Աւետարան 14, 15-17.23-26

[Եւ Յիսուս ասաց]. «Եթէ սիրում էք ինձ, կը պահէք իմ պատուիրանները: Եւ ես կ'աղաչեմ իմ Հօրը, որպէսզի մի ուրիշ Մխիթարիչ տայ ձեզ, որպէսզի յաւիտեան ձեր հետ լինի. Սուրբ Հոգին, որ յայտնում է ճշմարտութիւնը: Աշխարհը չի կարող ընդունել Նրան, որովհետեւ ո՛չ տեսնում է Նրան եւ ո՛չ էլ ճանաչում: Բայց դուք ճանաչում էք Նրան, որովհետեւ ձեր մէջ է մնում եւ ձեր հետ է լինելու»: [...]

«Ով սիրում է ինձ, կը գործադրի իմ խօսքերը: Իմ Հայրն էլ կը սիրի նրան, եւ ես ու իմ Հայրը կը գանք նրա մօտ եւ կը բնակուենք նրա հետ: Իսկ ով չի սիրում ինձ, չի գործադրի իմ խօսքերը: Իմ այս ասածները, որ լսեցիք, իմ խօսքերը չեն, այլ խօսքերն են իմ Հօր, որ ինձ ուղարկեց: Այս բոլորն ասացի ձեզ, քանի որ տակաւին ձեր հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին իմ Հայրը կ'ուղարկի ձեզ իմ անունով, նա ձեզ ամէն ինչ կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը՝ ինչ ես ասացի ձեզ»:

### ԿԱՊԱԿՑՈՒՄ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Մխիթարիչ Սուրբ Հոգին, որի գալուստը Տէրը խոստացել էր Իր Առաքեալներին, այսօր առատօրէն հեղուկ է նրանց վրայ: Գործք Առաքելոց գրքից ընթերցուած հատուածը պատմում է այս դէպքը, որ տեղի է ունեցել Պենտեկոստի օրը, այսինքն՝ Ջատիկի յիսուներորդ օրը: Բոլոր ներկաները լցւում են Սուրբ Հոգով, որը նրանց լիացնում է սրբազան եռանդով, սքանչելիքներ են կատարւում նրանց սրտերում եւ քաջութեամբ սկսում են քարոզել Տիրոջ Յարութեան բարի լուրը: Պօղոս Առաքեալը, Հռոմէացիներին ուղղած իր նամակում, հակադրութեան մէջ է դնում մարմնականն ու հոգեւորը:

Մարմնական ասելով չի հասկանում մարմնին վերաբերող ամէն բան, այլ միայն այն չափազանցութիւններն ու մոլութիւնները, որոնք հոգին հեռացնում են Աստուծոյ մտերմութիւնից, մինչդեռ առաքինի կեանքով՝ մարմինը դառնում է Սուրբ Հոգու տաճարը: Բայց քանի որ առաքինութեան կեանքը միշտ չէ՝ որ ապրում է հեշտութեամբ, Յիսուս, Աւետարանից ընթերցուած հատուածում, իր աշակերտներին խոստանում է Մխիթարիչ Սուրբ Հոգու գալուստը, որը հաւատացեալի սրտում միշտ բորբոքելու է հաւատքը, յոյսը եւ սէրը, եւ նրանց առաջնորդելու է դէպի յաւիտենական Արքայութիւն:

## ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

Ա) Հոգեգալստեան տօնը. Յիսուս առաքում է Սուրբ Հոգին:

Պենտեկոստէն ~ յունարէն բառից, որ նշանակում է «յիսուն» - Օրն է, որում աւարտում է Չափական Շրջանը, Սուրբ Զատիկին յաջորդող յիսուն օրերը: Այսօր տօնակատարում ենք Զատիկական իրադարձութեան գագաթնակէտը. Տէր Յիսուսը, մահից յարութիւն առնելով (Սուրբ Զատիկ) եւ երկինք համբարնալով (Համբարձում), Հայր Աստուծոյ կողմից մեզ է առաքում Սուրբ Հոգու Պարգեւը, որպէս փրկագործութեան պտուղ եւ արդիւնք: Յարութեան Կիրակին, Համբարձումը եւ Հոգեգալուստը՝ Զատիկական մէկ եւ միակ իրադարձութեան երեք պահերն են կամ հանգրուանները:

Յիսուս Քրիստոս առաքում է Սուրբ Հոգին, հոգիները սրբացնողը, նրանց զօրավիզն ու դատապաշտպանը: Միաժամանակ, սակայն, Սուրբ Հոգին կանխում է մեզ եւ վերարթնացնում է մեզնում հաւատքը, այնպէս՝ որ միայն ով ստացել է Սուրբ Հոգին, կարող է դաւանել՝ որ Քրիստոսը Տէրն է: Սուրբ Հոգին իր շնորհով "առաջինն" է, որ մեզնում վերարթնացնում է հաւատքը եւ մեզ մտցնում է հաւատքի նոր կեանքի մէջ: Նա առաջնորդում է մեզ դէպի Քրիստոսի, Նրա փրկարար գործի, մարդկանց նկատմամբ Նրա անսահման սիրոյ խոր ճանաչողութիւնը: Սուրբ Հոգին կրկին բորբոքում է մեզնում Աստուծոյ հանդէպ կարօտը, պարգեւում է մեզ հոգու այն քաղցրութիւնը՝ որն հարկաւոր է հաւատալու եւ Աստուծոյ Կամքին անմնացորդ յանձնուելու համար: Աստուածային Անձերի յայտնութեան մէջ "վերջինն" է, քանի որ ինքն է կապող օղակը մեր եւ Աստուածութեան միջեւ:

Հաւատալ Սուրբ Հոգուն նշանակում է դաւանել՝ որ Նա Ամենասուրբ Երրորդութեան Անձերից մէկն է, համագոյակից Հօրը եւ Որդուն, այսինքն՝ ունի Նրանց միեւնոյն եւ միակ Աստուածային բնութիւնը: Նա, ում Հայրն առաքեց մեր սրտերից ներս, Հոգին իր Որդու (Հմտ. Գղտ 4, 6), ճշմարիտ Աստուած է: Յիսուսը Քրիստոսն է, այսինքն՝ «Օժե՛ւլ»ը, որովհետեւ Սուրբ Հոգին Նրա «Օժե՛ւմ»ն է, եւ ամէն բան՝ որ կատարում է Որդու մարդեղութիւնից սկսած, բխում է այս լիութիւնից: Եւ իրօք, երբ Քրիստոս փառաւորում է Յարութեամբ ու Համբարձմամբ, կարողանում է իր հերթին, Հօր կողմից, առաքել Սուրբ Հոգին նրանց վրայ՝ ովքեր հաւատում են իրեն. նրանց հաղորդում է իր Փառքը, այսինքն Սուրբ Հոգին, որ փառաւորում է իրեն: Որդու եւ Հոգու համատեղ առաքելութիւնն է ի մի հաւաքել Հօր որդեգրեալներին, կազմելու համար Նրա Ժողովուրդը՝ Եկեղեցին: Որդեգրութեան Հոգու առաքելութիւնն է միացնել, պատուաստել մեզ Քրիստոսին, որպէսզի Քրիստոսով ապրենք:

Բ) Սուրբ Հոգու առաքելութիւնը:

Ասացինք, որ երբ Տէրը Սուրբ Հոգին առաքում է իր որդեգրեալները՝ բոլոր փրկուած մարդկանց վրայ, Սուրբ Հոգու առաքելութիւնը դառնում է նրանց միացնել Քրիստոսին եւ նրանց Քրիստոսով ապրել տալ: Հարկաւոր է համառօտ կերպով քննարկել այս երկու կէտերը:

ա) Սուրբ Հոգին միացնում է մեզ Քրիստոսին: Օգնում է մեզ տեսնելու Քրիստոս Տիրոջն իր ճշմարիտ Աստուածութեամբ եւ ճշմարիտ Մարդկութեամբ, զգալու Նրան

որպէս մեր կեանքերի անփոխարինելի Ընկերը: Սուրբ Հոգու հետ մտերմութիւնն այն է, որ մեզ պարգեւում է Քրիստոսի սերտ ու փորձառական ճանաչողութիւնը: Ուստի, երբեք չպէտք է դադարենք մեր եւ ուրիշների հոգիներում խնամելու Սուրբ Հոգու հետ ունենալիք այս պարզ, սրտաբուխ ու վեհանձն մտերմութիւնը: Մկրտութեան շնորհիւ Նա բնակուում է մեր մէջ, Իր տաճարներն ենք, Նա մեզ առաջնորդում է դէպի լիակատար ճշմարտութիւնը, Նա մեզ յայտնում է Քրիստոսի Սրտի խորքերը: Այսպիսով, ով իր սրտում սնուցում է Սուրբ Հոգու՝ Ամենասուրբ Երրորդութեան երրորդ Անձի հանդէպ բարեպաշտութիւնը, հասնում է Քրիստոսի եւ Նրա կողմից իրականացուած փրկագործութեան աւելի խորն ու աւելի յստակ ճանաչողութեանը, ինչպէս նաեւ՝ Հօր եւ Նրա անսահման սիրոյ ճանաչողութեանը:

բ) Սուրբ Հոգին մեզ ապրել է տալիս Քրիստոսով: Իսկապէս, Սուրբ Հոգու հետ ունեցած մտերմութիւնները մարդուն քայլ առ քայլ առաջնորդում են կազմելու կեանքի, մարդկանց, աշխարհի վերաբերեալ մի հայեցակէտ: Սուրբ Հոգին «քրիստոսականացնում է» հաւատացեալներից իւրաքանչիւրին, առաջնորդելով դէպի լիակատար ճշմարտութիւնը: Որպէսզի Սուրբ Հոգու հետ մտերմութիւնն անկեղծ լինի, հարկաւոր է՝ որ քրիստոնեան ընդունակ լինի Նրան ունկնդրելու եւ հաւատարմութեամբ գործելու, ինչ էլ որ սա արժեանայ, ինչպէս հաճելի է իր հոգու վսեմ Հիւրին: Նրա հետ օր ու գիշեր ունեցած զրոյցներն ու երկխօսութիւնները վայրն են, ուր քրիստոնեան կամաց կամաց սովորում է ճշմարիտ իմաստը ժամանակի ու յաւիտենականութեան, սիրոյ մէջ հաւատարմութեան, Աստուծոյ դուրս գտնուող իրականութիւնների ունայնութեան: Նա սովորեցնում է մեզ սիրել, սովորեցնում է ներել, փնտռել եւ գործադրել բարին առանց վարձատրութիւն ակնկալելու, վստահել Աստուծն եւ սիրել Նրան ամէն ինչից վեր: Այս բոլորը միասին՝ նշանակում է Քրիստոսով ապրել: Եւ յատկապէս, Սուրբ Հոգին օգնում է մեզ հասկանալու մեր տեղը փրկութեան գործում: Մեզ վերածում է մարտնչող առաքեալների, զգալ է տալիս Եկեղեցու, հոգիների կարօտութիւնները: Եթէ քահանայ ենք, սուրբ եռանդ է տալիս՝ Աստուծոյ ժողովրդի փրկութեանը նուիրուելու. եթէ վանական ենք, օգնում է աւելի խորն ու արմատական կերպով ըմբռնել «Քրիստոսին հետեւելու» պահանջները. եթէ ծնողներ ենք, օգնում է մեզ յարատեւելու մեր զաւակներին հաւատքի, բարոյականութեան եւ մարդկային արժէքների մէջ դաստիարակելու առաքելութեան մէջ: Եւ ընդհանուր կերպով, Սուրբ Հոգին օգնում է մեզ հասկանալու կեանքում մեր տեղն ու առաքելութիւնը, որպէս Քրիստոսի Մարմնի անդամներ:

Գ) «Մարմնի» եւ «Հոգու» միջեւ հակադրութիւնը:

« Ո վէեր մարմնի Ըամաշայն եւն ապրում, մարմնի իրականութիւնների մասին եւն խորհում, իսկ ովէեր ապրում եւն Հոգու Ըամաշայն, Հոգու իրականութիւնների մասին եւն խորհում: Բայց մարմնի ցանկութիւնները ցանում եւն մահուան, մինչ Հոգու փափաղները ցանում եւն կեանքի ու խաղաղութեան » (Հռմ 8, 5-6): Նախ հարկաւոր է յստակեցնել, ինչպէս արդէն ակնարկեցինք սկզբում, որ մարմին ասելով չի հասկացւում մարմնաւոր իւրաքանչիւր իրականութիւն, այլ միայն նրանք՝ որոնք հակառակ են հոգու կեանքին: Բոլորս էլ փորձառութեամբ լաւ գիտենք, որ "մարմնաւոր" այդ ձգտումները մահաբեր են: Մինչդեռ Հոգու համաձայն ապրուած կեանքի պտուղներն են. « Ս եր, զոտարութիւն, խաղաղութիւն, Ըամբերութիւն, Բարեացակամութիւն, Բարութիւն, Ըասարարմութիւն, Ըեղութիւն, ինքնաբերապէսութիւն » (Գղտ 5, 22): Այս առաքիւնութիւնների բխելն է հաւատացեալը զգում իր սրտի խորքում: Սուրբ Հոգին մեր համար կարծես ներանձնական եւ վերանցական ակունք է. « Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհը չի կարող ընդունել, որովհետեւ չի ցանում Նրան եւ չի ճանաչում: Բայց դու՛ ճանաչում ե՛լ Նրան, որովհետեւ չե՛ր մեջ է մտնում եւ չե՛ր Ըեղ է լինելու »: Սուրբ Հոգին գալիս է ի վերուստ, բայց ներթափանցում եւ բնակութիւն է հաստատում մեզնում, մեր ներքին կեանքը վերակենդանացնելու համար: Ո՛չ միայն « մեր Ըեղ է լինելու »-», այլ նաեւ « մեր մէջ »: Այսպիսով, այս հիմքի վրայ կերտւում է ներանձնական մարդը, մարդը՝ որ ջանում է ապրել « Աստուծոյ խորութիւններում », եւ ո՛չ թէ միայն արտաքին, յաճախ մակերեսային գոյութիւնը:

Այսպիսով, Սուրբ Հոգին.

- բնակվում է ինձնում. «Չգիտե՞լ, որ Աստուծոյ Գաճար էլ է Աստուծոյ Հոգին բնակում է յեզնում» (1Կր 3, 16).

- աղօթում է ինձնում. «Հոգին Ինչը անգագար բարեխօսում է մեր Համար անհոռու Հառաչանքներով» (Հում 8, 26).

- սովորեցնում է ինձ հասկանալ Աստուծոյ հայրութիւնը. «Ի՞նչ որ դու՛նք որդիներ էլ, դրա ապացոյցը այն փաստն է՝ որ Աստուծոյ մեր որդեկայն ներս առաւելեց Իր Որդոս Հոգին, որ աղաղակում է. Աբբա, Հայր» (Գղտ 4, 6).

- առաջնորդում է ինձ. «Ի՞նչը նրանք, որ առաջնորդում է Աստուծոյ Հոգով, նրանք Աստուծոյ որդիներ են» (Հում 8, 14).

- հնարաւոր է դարձնում, որ Քրիստոս ապրի ինձնում. «Խաչուել եմ Քրիստոսի Հեղեւայլեւ եմ չէ՛ որ ապրում եմ, այլ Քրիստոսն է ապրում ինձնում: Մարմնի այս կեանքն է ապրում եմ Աստուծոյ Որդոս Հանգեալ Հառաչով, որ սիրեց ինչ է իմ Համար որպէս զԸ նորոգեց» (Գղտ 2, 20):

Գ) Սուրբ Հոգին ճշմարիտ ազատութեան ակունքն է:

Պօղոս Առաքեալն ասում է, որ ուր ներկայ է Տիրոջ Հոգին, այնտեղ ազատութիւն է (2Կր 3, 17): Քրիստոնեայի կոչումը ազատութիւնն է. «Ի՞նչ, եղբայրներ, կանչուած էլ ապրութեան» (Գղտ 5, 13): Մարմինն ու մեղքը մարդու վզին փաթաթում են մի ծանր լուծ. մեղքի ստրկութիւնը: Մեղքի գործերը, որոնցից ազատ է Սուրբ Հոգուն հաւատարիմ քրիստոնեան, եսապաշտութեան (էգոիզմի) ու մոլութիւնների գործերն են, որոնք խոչընդոտում են մարդու ընթացքը դէպի Աստուծոյ Արքայութիւն: Սուրբ Հոգին հնարաւորութիւն է տալիս չլինելու սոսկ օրէնքներ պահողներ, այլ ազատ հոգիներ, Աստուծոյ ծրագրերի ջերմեռանդ ու հաւատարիմ իրագործողներ: «Ի՞նչը նրանք, որ առաջնորդում է Աստուծոյ Հոգով, նրանք Աստուծոյ որդիներ են: Եւ դու՛նք չէ՛լ սրայել ծառայութեան Հոգի, կրկին վախճ մեջ ապրելու Համար, այլ սրայել էլ որդեգրութեան Հոգին, որով աղաղակում ենք. Աբբա, Հայր» (Հում 8, 14-15):

## ՀՈՎՈՒԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ա) Խնամել Սուրբ Հոգու հետ մտերմութիւնը:

Քրիստոնեաներին տրուած է սրբանալու անճառելի եւ միաժամանակ պարզ ուղի. մտերիմ ընկերութիւն խնամել Սուրբ Հոգու հետ: Հարկաւոր է բոլոր մարդկանց օգնել բացայայտելու, որ եթէ ապրում են Աստուծոյ շնորհի վիճակում, այսինքն՝ առաքինի եւ մեղքից հեռու կեանքով, սեփական սրտում ունեն մի «վսեմ Հիւր», եւ որ Աստուծոյ Հոգու կենդանի տաճարն են: Կարող են սրտաբուխ պարզ խօսքերով գրուցել Նրա հետ: Նա լուսաւորում է նրանց իմացականութիւնը, որպէսզի լաւագոյնս ըմբռնեն Աստուծոյ սէրը. Նա զօրացնում է նրանց կամքը, որպէսզի կարողանան յարատեւել կեանքի պանդխտութեան ընթացքում, յաղթահարելով տարբեր դժուարութիւններն ու տառապանքները. Նա մխիթարում է նրանց, յատկապէս հալածանքներում, նեղութիւններում ու ճախողումներում. Նա ներկայ է Եկեղեցու եօթ խորհուրդներում եւ պարգեւում է աստուածային շնորհը. Նա օգնում է ամէն պահի կշռադատելու՝ թէ ի՛նչ պէտք է անել եւ ինչպէ՛ս պէտք է անել: Սուրբ Հոգու հետ այս մտերմութիւնը խնամելու գործնական եւ շատ պարզ կերպերից մէկը օրուայ ընթացքում յաճախ Նրան դիմելն է, նաեւ համառօտ աղօթքներով: Որպէս օրինակ առաջարկում ենք այս մէկը. «Սուրբ Հոգի, աղբիւր լոյսի, լուսաւորիր ինձ»: Կեանքի շրջադարձային որոշումներից առաջ, կամ փոքրիկ նեղութիւնների պահին, պարզութեամբ դիմենք. «Սուրբ Հոգի, աղբիւր լոյսի, լուսաւորիր ինձ»: Անշուշտ, ջանալով հեռացնել մեզնից խաւարի գործերը եւ չմոռանալով փառաւորել Նրան ուրախութեան մէջ եւ յաջողութիւնների պահին:

Բ) Քննել մեր մտքերը:

Մեր մտքում եւ մեր սրտում յայտնուող բոլոր մտքերը չէ՛ որ ինքնըստինքեան բարի են: Երբեմն կարող են սատանայի փորձութիւնները լինել, երբեմն էլ՝ հէնց մեր կրքերից ծնուող թելադրանքներ, որոնք հեռաւոր արձագանքն են մարդկութեան սկզբնական մեղքի: Միշտ չէ, որ կամենում ենք բարին, ինչպէս պէտք է որ վարուէինք: Ուստի հարկաւոր է արթուն լինել եւ ուղղել մեր կեանքի ընթացքը: Անկեղծ լինենք ինքներս մեր նկատմամբ եւ դիմակազերծենք մեր հոգին Աստուծոյ առաջ, ասելով. «Տէր, լուսաւորիր ինձ, անջատիր ինձ եսիցս: Մի՛ թող որ խաբուեմ, այլ օգնիր ինձ՝ ամէնուր եւ ամէն պահ անկեղծ լինելու սիրոյ մէջ»: Այս հարցում նոյնպէս, մեր կամքին կարող են մեծ նպաստ բերել փոքրիկ աղօթքները, յատկապէս օրհնութիւնները: Օրինակ. «Տէր, համաձայն չեմ այս ունայն մտքերի հետ: Օրհնութիւն եւ փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն յաւիտեանս. ամէն»:

\* \* \*

Ե՛կ, Սուրբ Զոգի, Սպէնծող էից,  
յայց ել ծրայք քոյ ծառայից,  
եւ վերնական շնորհօք քո լից  
զքո սպէնծեալ սիրոյ բուրից:

Մխիթարիչոյ յամենայնի,  
եւ Բարձրելոյն Պարգեւ բարի,  
Աղբիւր կենաց, Զուր կենդանի,  
Սէր եւ Օծուծն իմանալի:

Դու եօթնարփեան Ծնորիք վերին,  
Մաքն հայրական ազոյ ձեռին,  
Դու Աւետիք Զօր Բարձրելոյ,  
որ քան բարբառս բերանոյ:

Վառեա՛ զլոյս ի զգայարանս,  
Յեղ զսիրոյ քո զհոսանս,  
զգկարութիւն ծարձնոյ ծերոյ  
ծիշոյ զօրութեամբ քո ածրացո՛:

Ի բաց վանեա՛ զթշնամութիւն  
եւ պարգեւեա՛ զխաղաղութիւն,  
զի քեւ յաւէոյ առազնորդեալ  
առ ի չարեաց լիցուք զերծեալ:

Յուր ճանաչել ծեղ քեւ զՅայր,  
եւ զՄիածինն Իւր հաւասար,  
եւ ի Զօրէ զԶոգիոյ բղիտեալ  
յամենայն ժամ սերոյ հաւաքալ:

Փառք եւ պարիւ Զօր Աստուծոյ,  
եւ Միածնի յարուցելոյ,  
Զոգւոյն Սրբոյ Մխիթարչի,  
այժմ եւ յաւէոյ անլռելի:

Ամէն:

